ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/253

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2022թ. թիվ 26/26-1/9790-2022 գրությամբ «Վիլնյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 20.05.2022թ. թիվ ՍՄ//13669-2022 գրության հիման վրա, 27.05.2022թ. թիվ 26/26-1/9790-2022 գրությամբ նախաձեռնել է «Վիլնյուս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վիլնյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վիլնյուս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Վիլնյուս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/253 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.05.2022թ. թիվ ՍՄ//13669-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և «ՎԻԼՆՅՈՒՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) միջև 2022 թվական ապրիլի 11-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15-ՄԻՎ» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր): Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, պայմանագրի 8.5-րդ և 8.15-րդ կետերի համաձայն, օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու առաջարկ:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի, 2022 թվականի մայիսի 04-ին նախարարությունը կազմակերպության հետ կնքված պայմանագիրը միակողմանի/մասնակի լուծել է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «ՎԻԼՆՅՈՒՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեզ եմ ներկայացնում կազմակերպության կողմից ներկայացված հայտի փաթեթը, վերոնշյալ գնման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, ինչպես նաև պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ ծանուցումը և ընդունած որոշումը»:

Ներկայացնում եմ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՎԻԼՆՅՈՒՍ» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի ապրիլի 11-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15-ՄԻՎ» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրի և կից կնքված համաձայնագրի պատճենները, ինչպես նաև տեղեկագրում հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/253 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/253 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/253 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիլնյուս» ՍՊԸ-ի միջև 11.04.2022թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15-ՄԻՎ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը իրականացվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, ըստ պատվիրատուի պահանջի և համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2022թ.:

3. Պայմանագրի 8-րդ կետի 8.1-րդ ենթակետով սահմանվում է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը յուրաքանչյուրն իր մասով վերապահվում է «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին:

4. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 11.04.2022թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագրի N 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, շարադրվել է նոր խմբագրությամբ:

5. Պատվիրատուն 04.05.2022թ. N Ե-93 որոշման համաձայն՝ որոշել է 04.06.2022թ. միակողմանի մասնակի լուծել «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը 41-րդ չափաբաժնի «թխվածքաբլիթ 1» և 43-րդ՝ «վաֆլի 1» մասով:

6. Պատվիրատուն «Վիլնյուս» ՍՊԸ-ին ուղղված 04.05.2022թ. թիվ Ե-94 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ 04.05.2022թ. «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիլնյուս» ՍՊԸ-ի միջև 11.04.2022թ. կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15-ՄԻՎ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման պայմանագիրը «թխվածքաբլիթ 1» և «վաֆլի 1»»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 19.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.05.2022թ. թիվ 26/26-1/9790-2022 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 20.05.2022թ. թիվ ՍՄ//13669-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիլնյուս» ՍՊԸ-ի միջև 11.04.2022թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15-ՄԻՎ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը իրականացվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, ըստ պատվիրատուի պահանջի և համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2022թ.:

Պայմանագրի 8-րդ կետի 8.1-րդ ենթակետով սահմանվում է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը յուրաքանչյուրն իր մասով վերապահվում է «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 11.04.2022թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագրի N 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, շարադրվել է նոր խմբագրությամբ:

Պատվիրատուն 04.05.2022թ. N Ե-93 որոշման համաձայն՝ որոշել է 04.06.2022թ. միակողմանի մասնակի լուծել «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը 41-րդ չափաբաժնի «թխվածքաբլիթ 1» և 43-րդ՝ «վաֆլի 1» մասով:

Պատվիրատուն «Վիլնյուս» ՍՊԸ-ին ուղղված 04.05.2022թ. թիվ Ե-94 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ 04.05.2022թ. «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիլնյուս» ՍՊԸ-ի միջև 11.04.2022թ. կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15-ՄԻՎ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման պայմանագիրը «թխվածքաբլիթ 1» և «վաֆլի 1»»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 19.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե ***մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***5 օրից ավելի***:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորությունները ծագում են պայմանագրից, հետևաբար՝ պայմանագրով էլ սահմանվում են պարտավորությունները կատարելու կարգն ու ժամկետները և դրանց մասով խախտումներն էական համարվելու պայմաններն ու դեպքերը, մինչդեռ՝ Պատվիրատուն 04.05.2022թ. լուծել է 11.04.2022թ. կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15-ՄԻՆ» պայմանագիրը, Պայմանագրի կատարման վերջնաժամկետը այն է՝ 25.12.2022թ. և Պայմանագրի 2.1.1 ենթակետի և 2.1.7.1-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված ժամկետը, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, լրացած չլինելու, այսինքն՝ Պայմանագրի 2.1.7 կետով նախատեսված էական խախտման փաստը վրա հասած չլինելու պայմաններում:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Պայմանագրի N 1 Հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 41-րդ, 43-րդ և 44-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարումները պետք է իրականացվեն ըստ Պատվիրատուի պահանջի, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ

Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի նախաձեռնման համար տրամադրված փաստաթղթերում առկա չեն ապրանքների մատակարարման համար Ընկերությանը ներկայացված պահանջ, որպիսի պայմաններում միայն հնարավոր կլիներ արձանագրել Ընկերության կողմից ապրանքների չմատակարարման փաստը և որպես հետևանք Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման հիմքի իրավաչափության հարցը:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված, ինչպես նաև հիմք ընդունելով սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի բացակայությունը՝ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը նման պայմաններում չի կարող վրա հասնել և հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2022թ. թիվ 26/26-1/9790-2022 գրությամբ «Վիլնյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**